

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԱԳԱԹԱՆԳԵՂԵԱՅ

Նմանութիւն ծովու եւ վաճառականի:

1. Իղձք նաւելոց. ընդոստուցեալ ալիք, մրրկածին աւղք, կապոյտ դաշտ, անբայլ գնացք, անընթացք ոտք. շահ աւգտութեան, մահ մրցանաց, ավիւածիր աւագադիր սահմանք: 2-3. Խորք անդնդոց, ահագին ծով. ընտանիք եւ դրացիք, բռնութիւն իշխանաց, լուծ ծառայութեան թագաւորաց: 4. Ջրեղէն լերինք, ծովային ձորք, ուռուցիկ փոթորիկք, անթոյժ նաւահանգիստ, յետին տնանկութիւն, գլխոց փրկանք, պարտառուք եւ աւգուտ շահի: 4. Վաճառականութեան արուեստ, ծանրագին մարգարիտ, նոր եւ չքնաղ գիւտք, անուշահոտ խունկք, դեղք եւ արմատք աւգտակարութեան: 9-11. Երթելէ վաճառք, շահատակումն ընդ ալիս, մահ կամ կեանք:

12-13. Սոյն արինակ հարկ վտանգի ստիպէ նաւել ի վերայ իմաստութեան ծովուն. ոչ յանդգնութեամբ, այլ ի բռնութենէ իշխանաց: Մատենայած ծով պատմութեան: 14-17. Աղքատիմաց խանութ, հրաման թագաւորաց. անցեալ իրք, յայտնական պատմութիւնք որ առ մեաւք գործեցան. կարգ զրուցաց, դարգք դարգք պատմութեան:

18-21. Հոգեւորացն առաքիւնութիւն իբրեւ զմարգարիտն բոլորասեր. Հնդկային աշխարհ, մեծագնաց թանգարք, երկարուղի ճանապարհք, արտախոյր պսակի ի վերջաւորն փողփողեալ: 22-26. Գործք հոգեւորացն, որ նաւեալք ընդ մէջ մրրկեալ աշխարհակիր մեղացն վտանգեցան եւ պսակ մատուցին լուսաւոր թագաւորին: 27-28. Գինք այսպիսի վաճառաց. ականջք՝ աման պատգամաց, գինդ կախեալ, կոչունք արքայական, անուշութիւն խորտկաց, անթառամ զգեստ, շուշան ծաղիկ:

29-38 Ազաթանգեղոս ոմն ի մեծն Հռովմայ, Հռոմայերէն եւ Յունարէն ուսեալ դպրութիւն, տեղեակ ձեռնարկութեան նշանագրաց. դուռն Արշակունի, ուժեղ Տրդատ, ըմպշամարտ սկայագաւր. հրաման նորա վիպասանել զմարտամբոխ պատերազմաց. բովանդակութիւն վիպասանութեանս. Խոսրով քաջ, մահ նորա, հաւրամոյն քաջութիւն Տրդատայ. սիրելի վկայքն Աստուծոյ (=Հռիփսիմեանք), սքանչելիք ցուցեալք յաշխարհիս Հայոց ի ձեռն առն միոջ (=Գրիգոր). (Եկամուտ բանք Կորեան). լուսաւոր վարդապետութիւն նորա, ամենեքեան հնազանդեալ աստուածակարգ լծոյն. կործանումն մեհենից, կանգնումն եկեղեցեաց. Նոյն ինքն (=Գրիգոր) հովիւ կացուցեալ. երթն Տրդատայ յաշխարհն Յունաց յամս Կոստանդեայ, ուխտ եղեալ, դարձ նորա ի Հայս պարգեւաւք. տեղիք նուիրեալք Աստուծոյ. վարդապետութիւն սրբոյն (Գրիգորի):